# Յ· ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ

## ՃԱՌՔ

Էջ 1· տող 1·

« Ամենայն վիրաւորք մարմնով.... ար. ... անեն զվէրս ցաւոցն և հնարագէտ..... ըստ ցաւացուածին և ըստ վիրին չարութեան դեղ յօրինեն այնմ անդամոց ուր վէրն կայցէ »: Ուղղ. « Ամենայն վիրաւորք մարմնով առ մարմնաւոր բժիշկսն ցուցանեն զվէրս ցաւոցն չարութեան և հնարագէտ արուեստին ըստ ցաւացուածին »: Եւայլն:

Էջ 1· տող 4·

« Նոյնպէս և յորժամ մեղաց հիւանդութիւն ոք ունիցի, և առ բժիշկն հոգւոց մերձենայցէ, զոր ինչ վէրս մեղաց ցուցանիցէ, նորա բժշկին զնոյն չարութիւնն ծանուցանել, և վասն նորին խրատել և յանդիմանել »: Ուղղ. « մարթ է բժշկին » ցոյց տալ վէրքը, նա դեղ և սպեղանի դնելով վէրքի ցաւը և խոստումը կը բուժէ. Նոյնպէս ով որ հոգևոր բժշկին դիմէ՝ կարելի է հոգւոց բժշկին վէրքի չարութիւնը վերցնել՝ խրատելով և յանդիմանելով...: Թէպէտ կարելի է և այլ մտքով առնուլ. այսինքն մարթ է բժշկին բացատրել իրի չարութիւնն և անոր դէմ խրատել և յանդիմանել ուղղելու համար:

Էջ 16· տող 19·

« Զչար ամօթն մեղաւորաց, և զդառն անմահ տանջանսն յաւիտենականս »: Ուղղ. ըստ մի օրինակին՝ դառնամահ: Մեղաւորաց մահը թէ՛ դառն է և թէ՛ անմահ է, այսինքն անվերջ է. սակայն հեղինակի միտքն եղած է կրկնել սուրբ գրոց խօսքը թէ « մահ մեղաւորին չար է » ուստի սկզբնագիրն եղած լինելու էր « դառնամահ » քանի որ « անմահ » ածականին հաւասարազօր է միւս « յաւիտենականը ». ուստի անմահ տանջանք կամ յաւիտենական տանջանք մի են: Հմմտ. « Որչափ ես առաւել հրաման բանի բերանոյ Աստուծոյ դառնամահ տանջանօք տանջէ զարհամարհիչս իւր ». էջ 115. տող 29:

Էջ 23· տող 15·

« Զի ի սաստկութենէ աշխատիցն ցաւոց ոչ ի սէր սիրելեացն բերկրի, և ոչ ի թշնամանս ատելեացն զայրանայ »: Ուղղ. « աշխատեցուցիչ ցաւոց »: Հմմտ. « ի տարակուսանաց ցաւոյն »... « վասն տագնապի ցաւոց ». Անդ: Սաստիկ ցաւը մարդու վրայ լքում և տագնապ և տարակոյս կը բերէ. որոյ համար մի և նոյնն է թէ սէր սիրելեաց՝ և թէ ատելեացն զայրոյթ. այսինքն անզգայ կը դառնայ ամենայն զգացմանց և անընդունակ կրից:

Էջ 30· տող 15·

« Քանզի որ ճամանամօք փափկանան ». ծանօթութիւն դրուած է « յայլում օրինակի ճամանդամօք »: Մեզ թուի վերջինս իմաստի սխալ է և հերքելի ի բնագրէն: Հեղինակիս խօսքը բացարձակապէս կերակրոց վրայ է, ուստի համանդամոց գաղափարն բնաւ չկայ. վասն զի որոնք համանդամօք փափկանան, ոչ թէ խորհուրդս ազգի ազգի իմանան, այլ զգործն գլխովին կատարեն: Ուրիշ տեղ հեղինակս դարձեալ նոյն ձևով կը գրէ. Հմմտ. « Եւ զփափուկ ինչ կերակուրս և զճամանամ բացէ ի բաց հալածեն և ուրանան » էջ 3Թ. տող 31:

Էջ 40· տող 26·

« Զի յորժամ անճերկ հաւատով յամենայն սրտէ աղօթես առ Աստուած »: Ուղղ. անճերկ հաւատով: Հասկանալի է աներկ կամ աներկմիտ կամ միամիտ հաւատ, բայց անճերկ ոչ բնաւ:

Էջ 43· տող 13·

« Եւ արդ եկ ի քեզ, և զկեղծաւորական զխաբէութիւն մտաց և պաճուճանաց ընկեա ի քէն. ապա մուտ առաջի Աստուծոյ և խնա »: Ուղղ. խօսեա ? Մեղաւոր անձն զղջացած սրտիւ Աստուծոյ դիմած ժամանակ հարկաւ պիտի խօսի Աստուծոյ հետ. աղօթելով, աղերսելով, լալով, եւայլն:

Էջ 47· տող 17·

« Ըստ նմին օրինակի և որք զբանաւոր անդս գործել կամիցին, պարտ է յա-

digitised by A.R.A.R.@

ռաջ խոստովանութեամբ զփուշ մեղացն խլել, և պահոց և աղօթից զխոպանացեալսն և զխոտացեալսն կակղել»....։ Ուղղ. զխոտացեալսն։ Վարելահողն եթէ երկար թողնուի թէ՛ կը խոպանանայ, թէ կը կապուի, որ է խոտանալը. մինչ բնագրի «խոտացեալսն» նոյն միտքը չի տար, քանի որ շատ խոտաւեղիք կակուղ են և փափուկ հող ունին։ Իսկ ծանօթութեան՝ «զարօսացեալսն» դարձեալ խրատուրեան իմաստ ունի. որովհետև վարած փափկացուցած հողն եթէ մի, երկու տարի թողուի նա կ'արօսանայ, այսինքն կ'ամբանայ և կը պնդի, դժուարին հերկելու և վարելու համար։ Ընդհանրապէս արօս կը կոչուի ուժէ ինկած վարելահող արտը, զոր կը թողուն հանգչելու համար, և անոր ինքնաբոյս խոտը կը հնձեն։

Էջ 48. տող 18.

«Զի ոչ եթէ ի չափս ընչիցն, այլ ի կամս տալեացն նայի Աստուած, ընդունի ի մեծէն զմեծն իբրև զմեծ, ընդունի և ի սակաւէն զսակաւն իբրև զմեծ. զի որ ունիցի տասն դահեկան և դահեկան մի ողորմութիւն ծախիցէ, և աղքատն տասն լումայ միայն ունիցի և զմին աղքատագունին ևս տացէ, ընդ նմին համարեալ է առաջի Աստուծոյ»։ Ուղղ. «Ընդ մի համարեալ է»։

Էջ 51. տող 1.

“Բազում զաղտաձիգ նետիւք վիրաւորէ զմեզ սատանայ, և զվէրն չերևեցուցանէ. զսկիզբն իրացն երևեցուցանէ որպէս թէ առաքինի ինչ վարուք, և կատարէ յանհեղ անօրէնութիւնս. փոխանակ վարձուցն վաստակոցն արկանէ ընդ մեզօք անօրէնութեամբ. և որպէս ընծայիւք Կայենի և ընծայիւքն Ցեփրայեայ, որ կերպարանօք բարւոյ զգործ անօրէնութեան կատարէր„. Ուղղ. “Ընծայիւքն Ցեփթայեայ„ թուի եկամուտ անհմուտ գրչի. առաջին՝ անոր համար որ “ընծայիւք„ գոյականի կըրկնութիւնը ըստ տեղին չէ, և երկրորդ “կատարէր„ բայն եզակի դէմքով կը վերաբերի, Կայենի “ընծայիւք„ին որ յիրաւի անօրէնութեամբ երեխայրեաց վատերը նա կ'ընծայէր Աստուծոյ և անոր համար ալ խոտեցաւ. իսկ երրորդ՝ որովհետև Ցեփթայեայ ուխտն ոչ երբէք համարուած է իբրև անօրէն գործ, ապա թէ ոչ Առաքեալը Հեբրայեցւոց թղթին մէջ չէր դրուատեր անոր հաւատքը Սամուէլի և Դաւթի և այլ մարգարէներու հետ։

Էջ 79. տող 1.

“Ես լի անթիւ յանցանօք և ունայն ի վարուց առաքինութենէ. թափուր ի բարեաց և սոսկ յարդարութենէ, որ յամենայն ժամ յաւելում մեղս ի վերայ մեղաց, որ սպանանէ զիս չարաչար„։ Ուղղ. “Եմ լի անթիւ„ առաջին դէմք կը պահանջէ յետագայ դիմաւոր բայն “յաւելում մեղս„ և հայցական դերանունը “որ սպանանէ զիս„ Հմմտ. էջ 89. տող 1–2։

Էջ 87. տող 10.

“Ցոմանս բամբասանաց„։ Ուղղ. ըստ այլոց գործ. հոլով՝ “բամբասանաւք„? ըստ այսմ և միւսները։

Էջ 108. տող 28.

“Նստի հանապազ և խորհի պատահարս չարեաց և դիպուածս փորձութեանց նախանձորդին։ Ըղձանայ, շրջի մտախոհ յուսամարեալ, և երկնէ իբրև ծննդական„։ Ուղղել նախ կէտադրութիւնն՝ ըստ Նորայրի անդրադարձութեան՝ (Բառաքնն. էջ 70) և ապա կարդալ։ “Նստի հանապազ և խորհի պատահարս չարեաց և դիպուածս փորձութեանց նախանձորդին ըղձանայ. շրջի մտախորհ գուամարեալ և երկնէ իբրև(?) ծննդական„։ Դարձեալ։ “Եւ ամենևին ներուածս ինչ անհնարին վարանացն ոչ գտանես„. Անդ. տող 32։

Էջ 116. տող 32.

“Եւ ևս առաւել չարագոյն է՝ որ ընտանեայն և ջերմին մեղանեայ„։ Ուղղ. “և մտերմին մեղանեայ (անշուշտ ոչ նեղանեայ)„։ Հմմտ. անդ. “մինչև առ ընտանին և մերձաւորին ես մեղանչել„... “քանզի ընտանեաց և սիրելեաց մեղանչեն„։

Էջ 121. տող 35.

“Եւ ամենայն ցոփոզեացն և աղակզուացն՝ չև խօսք ի սրտին՝ երդուածս ի լե-

digitised by A.R.A.R.@

զուն կայ պատրաստ „ ։ Թուի ուղիղն՝ "աղալեզու„ լինել, այսինքն փուճ, անպիտան գէշ, համեմատ ցոփ–ոգոյն. և ոչ թէ ըստ ծանօթութեան "աղուալեզուացն „ որպէս թէ անուշ լեզու ունողաց։ Իսկ որ կայ ի 123 էջ տող 14 "ցոփոգեացն և աղաւաղ լեզուացն „, կամիմ ըստ նախընթացին աղալեզուացն, որպէս համազօր աղաչուր բառի իմաստին։

Էջ 127. տող 17.

"Եւ միշտ հեծէ և հանապազ թառանչէ յորովայնին ծանրութենէ... և շոգին աղտեալ ընդ երեսն մտանէ, և ընդ օդսն տարածանին և ազգի ազգի ցաւս ի մարմին թուլացուցանէ, զստամոքսն խանգարէ „. ..... Ուղղ. "ընդ երակսն մտանէ, և ընդ քթսն տարածանին „ — Ապականեալ շոգիք եւ ճանապարհ չգտնելով, կը ցրուին մարմնի երակներու, յօդախաղերու մէջ և տեսակ տեսակ ցաւերու պատճառ կը դառնան։

Էջ 127. տող 32.

« Իսկ զոգւոցն ցաւոցն զի՞նչ ասացից. ... սոսկումն ընմբին, արհաւիրք դատաստանին... անողորմ տանջանք... հնոցք վառեալք, յոր հուրն հոսեալ իջանէ յորդահոս գետոցն հրեղինաց, որ կան և պահին ի պահանջումն ամենայն մեղաւորաց և արբեցողաց »։ Ուղղ. ի պահպանումն։ Ուրիշ կերպ չէ կարելի այնքան ահագին և սոսկալի նկարագրութեան առջև։

Էջ 129. տող 13.

« Եւ ուր ենն և ուր երթանն և ուստի գան՝ ամենեւին իսկ ոչ իմանան, զի ըմբռնեալ ունին զզայութիւնս նոցա զինոյն թմբրութիւնք, որ յիմարեցուցանէ զիմաստութիւնս, թուլացուցանէ զմկրտութիւնս, քայքայէ զխորհուրդս »։ Ուղղ. « զիմաստութիւնն... զկորովութիւնն »?

Էջ 129. տող 32.

« Զի իմաստնոյն և ջուրն միայն բաւական է ի դադարումն ծարաւոյն, և ի պէտս խելացն զուարթութեան. քանզի զուարթ են, առէ խելք ջրարբուց և առողջ են մարմինք ուծակերաց »։ Ուղղ. նկանակերաց կամ հացակերաց? Տէրն յանապատին կերակրեց ժողովուրդը նկանակով և ձկով։ Իսկ եթէ կ՚ակնարկէ ճգնաւորներն որ ունդերով կերակրուէին կը հետևի որ մարմինք ունդակերաց՝ են առողջք։ Հմմտ. « իսկ որ զկենդանութեան զպէտս վճարէ, հաց է և ջուր և հանդերձ » էջ 130. տող 10.

Էջ 133. տող 17.

« Անտի է պառաւանց յայրատութիւն, և աղջկամարդկանցն գիջութիւն և արանց լկտութիւն, և կանանց կատաղութիւն. անտի են մարդելուզութիւնք և կնահանութիւնք և մանկապղծութիւնք և այլ զբրկութիւնք յաղագս զարդուցն պաճուճանաց »։ Ուղղ. գիջութիւն...... և այլազբրկութիւն։

Էջ 135. տող 27.

« Արհամարհութիւն, ձաղութիւն և հայհոյութիւն հոսեն ի նոցանէն հանապազ, զի ի ծաղր և ի խառն և ի խառնախոսութիւն դնեք փութացեալք հասանեն »։ Ուղղ. ի խաղն, որպէս՝ առհասարակ ամենայն հրապարակական տեսարանք, միմոսութիւնք։

Էջ 139. տող 37.

« Սրտիւ զսիրտս քննեսցուք, և աստէն մաքրեսցուք »։ Ուղղ. Սերտիւ. « Սրտի մաքրութիւնը ստանալու համար հարկաւոր է անաչառ և հաստատուն հետազօտութիւն որ է սերտիւ քննութիւն։

Էջ 149. տող 5.

« Չարեօքն չարաչար խոցոտիմք, և անհոգ եմք իբրև զառողջս. ընդ միշտ հիացեալ զարմանամ և սգամ հանապազ, քանզի գիտեմ զվիրին չարութիւնն, . . . զվիրացն ծուլութիւնս »։ Ուղղ. ծանրութիւնս. բժշկապետի մը հեղինակութիւնը հարկաւոր է ստուգելու ի՞նչ է վէրքի ծուլութիւնը. իսկ ծանրութիւնը ամէն ոք կ՚որակէ, առանց բժշկի յայտարարութեան։ Որովհետեւ փոխաբերաբար զուրցուած մ՚է, համեմատէ « և փտութեան ի նոցանէ մեղացն ծանրութիւն ». էջ 152. տող 25։

Էջ 150. տող 1.

« Եւ կամ զազիր և զարշելի անկող-

digitised by A.R.A.R.@

նոք ամուսնութիւն կատկելով զօրէն խոզի ընդ ցեխ և ընդ տիղմ թաւալեալ »։ Ուղղ· զամուսնութիւն կատարելով?

Էջ 161։ տող 33·

« Եւ ոմանք յուխտաւորաց՝ որք զխաչիւն ընծայս մատուցանեն, անցին զուխտիւն և ատեցին, և զզաշինս երդմանն արհամարհեցին »։ Ուղղ· զանձինս, հեղինակս բանական մարդն ի նկատի ունի, որ իւր բարոյական գործերով պատասխանատու է առաջի Աստուծոյ· ուստի ցոյց տալու համար թէ ինչո՞ւ Աստուած կը պատուհասէ մարդիկը, շատ պատճառներ ցոյց կու տայ. ի միջի այլոց՝ նա կ'ըսէ և ուխտաւորները, այսինքն ուխտ և դաշինք դնողները Աստուծոյ հետ, իրենք զիրենք նուիրելու կրօնաւորութեամբ սրբակաց վարուք, հրաժեշտ տուած աշխարհի, նոքա իրենց ընծայն՝ մարմինը, յետ կը վերցնեն, ծառայելով աշխարհի և մարմնոյ, որով կը ստեն իրենց խօսքին և կը ջրեն դրած դաշինքը։ Հմմտ. « Աղաչեմ զձեզ եղբարք գթութեամբն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխօսուն պաշտօնդ ձեր »։ Հռ. ԺԲ. 1. — Իսկ բնագրէն ընդօրինակող աբեղայն? կամ երէցն? «ուխտաւորաց »ին ընդհարուելով՝ խելոյն կը յիշէ որ իրեն խոստացած զառն և ոչխարը բերելու դրժեր են ուխտաւորները, սրտի կսկծէն մեքենայօրէն գրուած մտքի հետ՝ « զանձինս » փոխեր է « զխաշինս »ի հետ։

Էջ 161· տող 25·

« Եւ ոմանք ի կրօնաւորաց ոչ երկիւղիւն Աստուծոյ պարկեշտանան, այլ կերպարանեալք պճնին առ ի մարդկանէ, յիմարեալք ախտիւն սնափառութեան զԱստուած անգիտացուցանեն? »։ Ուղղ· պատուին? կրօնաւորք ընդունելով մարդկանց պատիւը, փոխանակ պարկեշտանալու՝ թէ ծառայք անպիտանք եմք՝ ընդհակառակն սնափառութեամբ զԱստուած կ'անարգեն։

Էջ 176· տող 12·

« Եւ արդ ի՞ւ իւիք քրիստոնեայ անուանեսցուք զնոսա որք սատանայական մոլորութիւնս մոլորեցին ի վերայ մեռելոյն »։ Ուղղ· մոլութիւնս մոլեցին։ Հեթանոսաբար կոծիլն և ցտելն՝ մոլութիւն է, ախտաւորութիւն է, բարոյական առաքինութեան բացակայութիւն է և ոչ թէ մտքի և համոզմունքի մոլորութիւն։ Մոլութիւն՝ կամայն է. իսկ մոլորութիւնը՝ մտքին։ Հմմտ. « Եւ անամօթապէս խզացեալք մերկանդամք խզին և կոծին մոլեգնով, իբրև զմոլիկն չարալլուկս դիւահարեալս »։ Անդ· տող 33. — Դարձեալ « Եւ սատանայազգեաց դիւամոլ կոծողացն ». էջ 177· տող 11։

Էջ 184· տող 19·

« Ժամանոցամս եմ աղտեղեալ »։ Ուղղ· ժամանոտ ոգւովս?

Էջ 185· տող 21·

" Ցազեցո ի քաղց եմ ի սիրոյդ քումմէ ,,։ Ուղղ· զքաղց իմ?

Էջ 185· տող 25·

" Մի՛ ընդ պատժեալսն պարտաւորեայ ,,. Ուղղ· պարտաւորեր?

Էջ 185· տող 30·

" Զի ի հուր գեհենին է ժառանգութիւն իմ ,,։ Ուղղ· զի հոր?

Էջ 190· տող 25·

" Իսկ եթէ լեզուաւ կոչես զԱստուած արարիչ, տուիչ և փրկիչ և կեցուցիչ, իշխան մահու և կենաց, և սրտից և անձամբդ առ դիւթս, առ թովիչս և առ հարցուկս և առ ուռութս և առ խտիրս և առ հմայս գնասցիս ,,։ Ուղղ· դեգերեսցիս?

Էջ 191· տող 23·

" Եւ ընդ մտանելն յարանչտի ,, Ուղղ· յարանչտի? ըստ ժողովրդի գործածութեան։

Էջ 203· տող 27·

" Վասն փոքր կարծելոյ Կայէնի զԱստուած անգէտ համարել սպանմամբ Աբէլի՝ երերումն և տատանումն ընկալաւ ,, Ուղղ· Սպանմանն։ Աստուծոյ հարցմանը Կայէնի տուած պատասխանը՝ արհամարհական է՝ իբր անգէտ համարելով զնա Աբէլի սպանման. այդ արհամարհանքի համար պատժուեցաւ. և ոչ թէ Աբէլի սպաննուելովը՝ Կայէնը երերեալ և տատանեալ եղաւ։

digitised by A.R.A.R.@

Էջ 210. տող 2.

"Այլ գինոյ և իւղ, ձու, ձուկն, պանիր, կոգի, կաղտի, թածին, շնուկ, կաթն, խեր, և ձկնամորէ,,: Ուղղ. կազտի (կզտի), ժամիկ.... խեչ կամ խիժ? կղտի քամած լոռն է. ժամիկն փտորած պանիրն. խիժն. նոր ծնած անասնոյ կաթն զոր մակարդելով շինեն՝ դալը:

Էջ 218. տող 36.

"Արդ զոր օրինակ եկեղեցին կոչեցաւ քահանային,,: Ուղղ. հարսն? ամուսին? Հմմտ. փեսայն Քրիստոս՝ հարսն եկեղեցին. իսկ քահանայն ունի զտեղի Քրիստոսի, որով եկեղեցին լինի Նորա հարսն:

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

## ԱՅԼԵՒԱՅԼՔ

— Անգլիացի ենթասպայ մը այսուհետև պիտի չկարենայ բարձրանալ՝ եթէ յաջողութեամբ չանցնէ իր... առողջապահութեան քննութիւնները: Ամէն ենթասպայ իր գունդին առողջաբանութեան դասատուն պիտի ըլլայ: — Զարմանալի՜. ուրիշ տեղ զօրավարները քաջութեամբ մեռնիլ կը սորվեցնեն զինուորներուն, իսկ Անգլիացիները... քաջառողջ ապրիլ:

— Պէռլինի արքունի գրատունը 1, 230, 000 հատոր ունի. Մոնաքոյինը՝ 1, 110, 000, Ստրազպուրկինը 900, 000, Կոթթինկայինը 536, 000, լայփցիկինը՝ 500, 000.

— Զուիցերիոյ նաւատորմիղը՝ անտարակոյս՝ անգլիականին չափ գրաւած չէ աշխարհիս ուշադրութիւնը. պէտք է խոստովանիլ սակայն թէ նա նաւական պատկառելի ոյժ մ'ունի, իր լիճերուն համեմատութեամբ: 279 նաւ ունի, որոնցմէ ոմանք 1200 ճամբորդ շրջեցնելու չափ մեծութիւն ունին:

— Սիմսընի հնարած ելեկտրական թնդանօթը 10 քիլոմեթր հեռու կը նետէ ամենէն ծանր գնդակը: Զունի ձայն և ծուխ. աւելի արժան է:

— Անգլիացիները իրենց պատերազմական նաւերուն մէջ՝ քարիւղ պիտի գործածեն՝ կաթսաները տաքցնելու համար: — Այս որոշողութիւնը կարևորութենէ զուրկ չէ Բագուի նաւթահանքերու տէրերուն համար:

— Ֆրանսացիք՝ իրենց ազգի նուազման առջևն առնելու միակ միջոց մը գտած են. չամուսնացողները տուրքի ենթարկել, տուրքը բաժնել ընտանեաց հայրերուն՝ իրենց որդիներու թուին համեմատութեամբ:

# ԱԼԼԱՀՎԷՐՏԻՆԵՐԸ

### ՊԱՅԱԶԱՏՔ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԱՑ

## ԺԴ.

1700 թուականին մօտեր նայձի Սահակ Կամսարական ուղղափառ հաւատքի մէջ ալ շատ անուանի էր և բարեպաշտ. ասիկա իւր մէկ աղջիկն Արծթի հարսնացուցեր էր, ուր բոլոր գեղացիք յուղղափառութիւն դարձեր էին, և հնաշէն հոյակապ եկեղեցի մ'ունէին, որն որ հիմա ալ կայ: Այն սուրբ Աստուածածնի Եկեղեցոյն յիշատակ թողեր է մէկ չայիր մը նալճի Սահակն, որ ամէն տարի պատարագ ըսուի իւր ննջեցելոց հոգւոյն. նոյն չայիրն դեռ եւս կայ և յիշատակարանն ալ եկեղեցւոյ մէջ աւազանին մօտ քարի մը վրայ գրուած է: 1702 թուականին սկսաւ Հայոց հալածումը կաթոլիկաց դէմ՝ Եփրեմ և Աւետիք պատրիարգաց օրը, և օրէ օր սաստկանալ սկսաւ: 1707 [1] Յովհաննէս Զմիւռնացի Հայոց պատրիարգ այս հալածանք վերջին աստիճան հասուց. երանելի Կոմիտաս քահանան ալ թուականին մէջ նահատակվեցաւ. շատերն այս պատճառաւ տաճկացան, շատերն ալ ի ծառայութիւն թիոյ, այս է քիւրէկը, գացին ի Կ. Պօլիս: Այս դառն հալածանք դրսի երկիրներն ալ հասաւ, որ ի Հինձք գիւղ Գամսարենց նալճի Սահակ, Կոստան, Նոր Պարոն և Խալիկ բռնվեցան, և չորս հատ Կարնեցի երեւելի իշխանաց և ուրիշներու հետ բանտ դրվեցան երկու ամիս, և ետքը տուգանք տալով ազատեցան:

---

1. Յովհաննէս Զմիւռնացի պատրիարքին կաթոլիկեայ Հայոց դէմ հալածանքը թէպէտեւ 1707թուին սկսաւ ի Կ. Պոլիս, սակայն գաւառներուն մէջ և մասնաւորապէս ի Կարին 1715ին եղած կը պատմէ Զամչեան (Պատմ. հտ. Գ. եր. 761) ըսելով. «Կալան և ի Կարին քաղաք զբազումս ի քահանայից և յաշխարհականաց, և եդին ի կոճեզս, յորոց ոմանք մեռան անդէն, և ոմանք յետ ժամանակաց զերծան». բայց վերոյիշեալ Գամսարենք չյիշեր ամենևին:

digitised by A.R.A.R.@